**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

16 սեպտեմբերի 2013 թվականի N 200 - Ա

## ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով "Ներքին աուդիտի մասին" ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ և 5-րդ հոդվածի 5-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N165-Ն հրամանով հաստատված հավելվածի 9-րդ կետի պահանջները՝

Հրամայում եմ

1. Ներքին աուդիտի համակարգի աշխատանքներին աջակցելու նպատակով ստեղծել ներքին աուդիտի կոմիտե հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| Ա. Անդրեասյան | - ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ (ներքին աուդիտի կոմիտեի նախագահ), |
| Է. Պապյան | - Կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ, |
| Ք. Աղվանյան | - Կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ, |
| Մ. Կարապետյան | - Կոմիտեի աշխատակազմի փորձագետ, |
| Կ. Սարգսյան | - Կոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար): |

2. Սույն հրամանի հսկողությունը վերապահում եմ ինձ:

**ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**